

Հարվածելը չի օգնում



Երբեմն ես ինձ հիասթափված և զայրացած եմ զգում:



Ես զայրանում եմ, երբ ինչ-որ մեկը առանց հարցնելու վերցնում է իմ խաղալիքները:



Ես զայրանում եմ, երբ փորձում եմ ինչ-որ մեկի հետ խոսել, իսկ նա ինձ չի լսում:



Ես զայրանում և հիասթափվում եմ, երբ մեծահասակն ինձ ասում է՝ «Ո՛չ»:



Ես զայրացած կամ հիասթափված եմ, երբ չեմ կարողանում ինչ-որ բան անել ինքնուրույն, օրինակ՝ դասերս:

Հարվածելը չի օգնում



Ջայրացած ժամանակ ես հարվածում կամ ցավեցնում եմ մարդկանց:



Երբեմն ես առարկաներ եմ նետում նրանց վրա:



Ջայրույթ զգալը նորմալ է, բայց հարվածելը կամ առարկաներ նետելը նորմալ չէ:

Հարվածելը չի' օգնում:



Երբ ես հարվածում եմ կամ առարկա եմ նետում, ես ցավեցնում եմ մարդկանց:
Եվ դա չի օգնում ինձ լուծել խնդիրը:



Եթե ես ցավեցնեմ մարդկանց, գուցե նրանք այլևս չցանկանան խաղալ ինձ հետ:

Հարվածելը չի օգնում

 <p>Ես հիմա խաղում եմ, խնդրում եմ՝ մի՛ վերցրու իմ խաղալիքը:</p>	<p>Երբ ես օգտագործեմ բառեր, ես կարող եմ լուծել խնդիրը առանց մարդկանց ցավեցնելու:</p>
 <p>123</p>	<p>Երբ ես զայրացած եմ, պետք է խորը շունչ քաշեմ և հաշվեմ մինչև երեքը:</p>
	<p>Ես պետք է հիշեմ՝ ոչ մի հարված:</p>
	